

12280



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 08 » 11 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 243 - 24

Նախաձեռնող՝

«ԵՐԱՌՄՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԲԸ

ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան, 1-ին թաղ., 18 շենք, 33 բնակարան

Գործունեությունը՝

Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 5-րդ նրբանցք 1 հասցեում լոգիստիկ պահեստային և սառնարանային տնտեսության կառուցում

ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 243 - 24

«08» սեպտեմբերի 2024թ.

Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 5-րդ նրբանցք 1 հասցեում նախատեսվող լոգիստիկ պահեստային և սառնարանային տնտեսության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԵՐԱՌՄՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան

Ներածական մաս. «ԵՐԱՌՄՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԲԸ-ն նախատեսում է Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 5-րդ նրբանցք 1 հասցեում լոգիստիկ պահեստային և սառնարանային տնտեսության կառուցման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման № 01-005-0567-0001 վկայականը, Երևանի քաղաքապետարանի կողմից տրված № 01/18-01-298-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլն արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց, 5-րդ նրբանցք 1 հասցեում:



10-րդ մասնաշենքը նախատեսվում է երեք հարկ, առանց նկուղային հարկի, տանիքը հարթ, ջրահեռացումը՝ կազմակերպված, ներքին խողովակներով:

0.00 մ հարաբերական նիշը 1-ին մասնաշենքի համար համապատասխանում է շինության մաքուր հատակին, որը գտնվում է 1200 մմ բարձր՝ տարածքի ասֆալտապատումից: 2-8-րդ մասնաշենքերը՝ 1250 մմ, իսկ 10-րդ մասնաշենքը՝ 300 մմ:

Բոլոր մետաղական տարրերը նախատեսվում է ներկել երկտակ հակակոռոզիոն ներկով: 1-ին մասնաշենքն ունենալու է բեռնատարների համար նախատեսված 8 մուտք, մնացածը՝ երկուական:

Ներբակային տարածքում իրականացվելու է ասֆալտապատ ճանապարհի՝ նախատեսված բեռնատարների համար և Նուբարաշենի խճուղուց դեպի տարածք մոտեցնող երկրորդական գրունտային ճանապարհի ասֆալտապատում:

Պահեստային տարածքների հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է՝ համաձայն՝ ՀՀՇՆՈՒ-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Նախատեսվող լոգիստիկ պահեստային և սառնարանային տնտեսության տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝.

- հողի ընդհանուր մակերես՝ 34705,25 մ²,
- կառուցապատման մակերես՝ 17,115.36մ² – 49.32%,
- ասֆալտապատում՝ 15,676.4մ² – 45.17%,
- կանաչապատման մակերես՝ 1,913.49մ² – 5.51%:

Գազամատակարարում չի նախատեսվում:

Ջրահեռացման կոյուղու ներքին ցանցն իրականացվելու է D=50-160 մմ տրամաչափի կոյուղու պոլիէթիլենե խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով: Ջրահեռացման կանգնակի վրա նախատեսված են ստուգիչներ: Կոյուղու թողակները պոլիէթիլենե խողովակներով միացվելու են կոյուղու բակային ցանցին:

Պահեստային շենքերից օդափոխության նպատակով ներածման և արտածման համակարգերը տեղադրվելու են առաստաղի տակ: Օդափոխության համար օգտագործվելու են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կփոխարինվեն նույնատիպ պարամետրերով այլ համակարգերով: Արտածումը կատարվելու է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Ծխահեռացման օդամուղները տեղակայված են տանիքի վրա: Շենքում նախատեսված են ներածման և ծխի արտածման համակարգեր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Հաշվի առնելով այն հազամանքը, որ տարածքում երթևեկելու են բեռնատար մեքենաներ, որոնց մուտքի, ելքի և շրջադարձի համար անհրաժեշտ է ապահովել տարածքի ամբողջական անցանելիություն, կանաչապատումն իրականացվելու է միայն գազոնի և ծաղկանոցի տեսքով:

Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում՝ կապված հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման,



թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, ինչպես նաև աշխատանքի անվտանգության հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռսուրսների, մթնոլորտային օդի) պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են՝

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում գրունտի խոնավացում և ճանապարհների ջրցան,
- շինհրապարակը ցանկապատվելու է, կառուցվող շենքերը կծածկվեն համապատասխան բարձրության ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով,
- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում,
- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
- շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,
- բացառվելու է անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով:

Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն)՝ նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

Աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելմանը, մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ՝ մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ՝ 24 ժամը մեկ անգամ հաճախականությամբ, տարածքի ջրցանում փոշենստեցման նպատակով՝ 250 օր, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ըստ պահանջի:

Շինարարության ընթացքում մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 2600000 ՀՀ դրամ:

Պարճառաքանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային լուծումներն իրականացվել են Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում:

Հանրային լուծումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:



Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:


Փորձաքննական պահանջներ


1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր:
4. Շինարարական աշխատանքի ավարտից հետո տարածքի կանաչապատումն իրականացնել՝ համաձայն հաշվետվությամբ ներկայացված պահանջների:
5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:




ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԵՐԱՌՄՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԲԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 5-րդ նրբանցք 1 հասցեում նախատեսվող լոգիստիկ պահեստային և սառնարանային տնտեսության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝  Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝  Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝  Միքայել Սարոյան